ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 828, www.court.am

N ԴԴ-2-Ե-9953

«20» նոյեմբերի 2026թ.

«ՄՈԴԵՌԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Վրացական 7, բն. 8)

Հարգելի՛ պարոն Համբարձումյան,

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների, տոներային քարտրիջների և չիպային քարտերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2026թ. նոյեմբերի 04-ի որոշմամբ 8-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ չափաբաժինների մասով «ՄՈԴԵՌԻ» ՍՊԸ-ն հայտարարվել է Ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2026թ. նոյեմբերի 16-ը ներառյալ:

Հիշյալ անգործության ժամկետում պայմանագիր կնքելու մասին որոշումը չի բողոքարկվել:

Տեղեկացնում եմ, որ 8-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ չափաբաժինների մասով կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների (Ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հարգանքով՝

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/17» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Մ. Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788